# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՆԻՄԵԴ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 5 | Սարքին ներկայացվող նվազագույն պահանջներն են՝ Շարժական կենդանաբուժական LED վիրաբուժական լամպը նախատեսված է վիրահատական դաշտի բարձր ճշգրտությամբ, միասեռ և առանց ստվերների լուսավորության ապահովման համար՝ շների, կատուների և այլ կենդանիների վիրաբուժական միջամտությունների ընթացքում: Սարքավորումը ապահովում է օպտիմալ տեսանելիություն՝ նպաստելով վիրաբույժի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և միջամտության անվտանգ իրականացմանը: Լամպը հիմնված է բարձր արդյունավետության LED տեխնոլոգիայի վրա, որը ապահովում է երկարաժամկետ շահագործում, նվազ էներգասպառում և նվազագույն ջերմային արտազատում՝ բացառելով վիրահատական դաշտի տաքացումը: Տեխնիկական բնութագիր՝ լուսավորության ինտենսիվություն՝ 40,000 – 120,000 լյուքս (կարգավորվող), գունային ջերմաստիճան՝ 3,500K – 5,500K (կարգավորվող՝ բնական գունային վերարտադրության համար), գունային վերարտադրության ինդեքս (CRI)՝ ≥ 95, լույսի դաշտի տրամագիծ՝ 120 – 250 մմ, լույսի հավասարաչափություն՝ ≥ 90%, լամպի հզորություն՝ 30 – 80 Վտ, լուսավորության կարգավորում՝ աստիճանական (dimming)՝ 10% – 100%, կառավարման համակարգ՝ սենսորային կամ մեխանիկական կարգավորիչներով: Կառուցվածքային առանձնահատկություններ՝ շարժական կայուն հենակ՝ անիվներով և արգելակային համակարգով, կարգավորվող բարձրություն և լամպի գլխիկի ճկուն դիրքավորում Լրացուցիչ պահանջներ. Սարքը պետք է համալրված լինի աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր աքսեսուարներով, միացման լարերով, ներառյալ փաստաթղթերը: Սարքը մատակարարել գործարանային փաթեթավորմամբ: Սարքը տեղադրելուց հետո սարքը պետք է բերվի |

| | |
|---|---|
| | աշխատանքային վիճակի: Երաշխիքային ժամկետը` Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրացուցային օրը: Սարքի երաշխիքային սպասարկումը` տեղում (Պատվիրատուի հասցեում), իսկ դրա անհնարինության դեպքում տեղափոխում սպասարկման կետ, հաշվի առնելով որ տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը իրականացվելու են Վաճառողի կողմից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՆԻՄԵԴ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 5 | |